այդ սովորութիւնից։... Ժողովը նպատակայարմար համարեց՝ մի յանձնաժողով ընտրել, որ գործակալ վարդապետի նախագահութեամբ՝ հաղեմասու և առհասարակ դիւղական նշանագրութեան ու հարսանիքի վերաբերեալ այլ տգեղ սովորութիւններն ու շռայլ ծախքերը արմատախիլ անելու և չափաւորելու համար՝ մանրամասն ծրագիր ու պարտադիր կանոններ կազմէ և ներկայացնէ հետևեալ քահանայական ժողովին» [1]։

Խօսք չկայ, որ այդպիսի պայմաններում շատ ծանր է լինում այն աղջկայ դրութիւնը, որը մօտենում է ամուսնական հասակին։ Կարծես, ժողովրդի մէջ ամենքն էլ զգում են այդ. բայց և այնպէս՝ հաշտւում են իրականութեան հետ, հաշտւում են հարս գնելու գաղափարի հետ, հետևելով ու հաւատարիմ մնալով «պապերի ադաթին»։ Մանաւանդ զգում են իրենց այդ անմխիթար վիճակը հէնց իրենք կանայք. նոքա զգում են, թէ իրենք առարկայ են և դրուած են ասպարիզի վրայ սակարկութեան ու վաճառքի համար։ Եւ նոցա այդ հոգեկան դրութիւնն արտայայտւում է միմիայն այն երգերում, որոնց մէջ հայ գեղջկուհին գիտէ մելամաղձիկ ու ազատօրէն իւր ցաւերը հնչեցնել։ Բուլանըխում, նմանապէս և Զաւախքում, երբ հարսին զարդարում են հարսանիքի ու պսակադրութեան խորհրդի համար, կանանց մասում միշտ երգում են հետևեալ ընդհանուր տողերը, որոնք պարզ ցոյց են տալիս թէ կանանց ճակատագիրը որոշւում է առևտրով՝ գնմամբ.

Զհէրիկ խաբեցին կուռէ մէ գինով,
Զմէրիկ խաբեցին թոփիկ մէ շիլով,
Զաղբէր խաբեցին ջուխտակ մէ ջրմով,
Զքուրիկ խաբեցին մատիկ մէ հինով.
Զդրամի հանգուրձ արձրկեցին՝
Զաղջիկ մամուց ջոկեցին [2]։

---

[1]) «Մշակ», 1902 թ. № 149.

[2]) Բենոէ—Բուլանըխ՝ Ազգագրական Հանդէս 1899 թ. գիրք Ե. նաև Ե. Լալայեան—Զաւախք, եր. 141.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան